ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

N 07/21/11002-2022

«27» 12 2022թ.

«ՋԻՋԻ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ-Ի

ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ Լ.ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Վարդանյան,

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և «ՋԻՋԻ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ-ի միջև 11.10.2022թ. կնքված թիվ «ԲՏԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-2022/11-1» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն, Ձեր ընկերությունը պարտավոր էր սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում մատակարարել պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով:

Համաձայն Պայմանագրի N 2 հավելվածով սահմանված մատակարարման ժամանակացույցի՝ ապրանքը պետք է մատակարարվեր Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում: Սակայն «ՋԻՋԻ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ-ի կողմից վերոնշյալ պայմանագրի շրջանակներում ապրանք չի մատակարարվել:

Համաձայն Պայմանագրի 2.1.7 կետի՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը. Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, հիմք ընդունելով 11.10.2022թ. կնքված թիվ «ԲՏԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-2022/11-1» ծածկագրով գնման պայմանագրի 2.1.7 կետը, 2022 թվականի դեկտեմբերի 27-ին միակողմանի ամբողջությամբ լուծում է վերոնշյալ պայմանագիրը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 3/3, հեռ. (37410) 590009, էլ. հասցե՝ narek.melkumyan@hti.am

հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տեղեկացնում ենք նաև, որ «ՋԻ ՋԻ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական «900005028106» հաշվեհամարին վճարել տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 %-ի չափով՝ 27 300 (քսանյոթ հազար երեք հարյուր) ՀՀ դրամ գումարը: Ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական «9000050000758» հաշվեհամարին ենթակա է գանձման 546 000 (հինգ հարյուր քառասունվեց հազար) ՀՀ դրամ, որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում, ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական «9000050000664» հաշվեհամարին ենթակա է գանձման 819 000 (ութ հարյուր տասնինը հազար) ՀՀ դրամ որակավորման կատարման ապահովում:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ եթե 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում Ձեր կողմից վճարվեն վերը նշված վճարման ենթակա գումարները, ապա ընկերությունը չի ներառվի գնումներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարման կտրոնների բնօրինակները ներկայացնել ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն:

Հարկ ենք համարում նաև նշել, որ համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի՝ պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ ծանուցումը սահմանված կարգով կհրապարակվի www.procurement.am պաշտոնական տեղեկագրում:

12/27/2022

X

ՆԱՐԵԿ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Signed by: MELKUMYAN NAREK 3114850200 **ՆԱՐԵԿ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Գնումների բաժնի պետ՝
Ա. Բաղդասարյան 010 59 00 47